բարին Հայոց և Յունաց, և նոքա գնացին անդ բազմութեամբ ըստ առաջնոյն. ընթերցան նախ զհրաման Արքային, որ ունէր օրինակ զայս. եթէ ստոյգ համարին Հայք և Յոյնք զհրովարտակս Սէլիմայ Արքային, զորս տուեալ է նոցա 'ի տիրելն իւրում Երուսաղէմի, բարւոք է. իսկ եթէ ոչ, առցի 'ի ձեռաց նոցին, անվաւեր և խափանեալ համարեսցի. եւ եթէ իսկապէս ընկալցին զնոսա, որպէս Սէլիմ, նոյնպէս և ես ետու նոցա տիրել ըստ այնմ եղանակի տեղեաց իւրեանց, և մի լինիլ յափշտակիչ իրաւանց իրերաց և կազել ընդ միմեանս. այլ վարիլ ըստ առաջին օրինաց և կարգի, թէ 'ի սեփհական և թէ յընկերովի տեղիս։ Եւ հետեւակ երեք ազգքն ում եւ կամեսցին, նմա հետեւեսցին, եւ այս խնդիր ստուգեսցի յԵրուսաղէմ։ Այլ 'ի խնդիրն չինութեան մի ոք համարձակեսցի յառաջ մղիլ. զի ես եմ տէր և Թագաւոր երկրին եւ իմ է իրաւունքն այն, ում կամիմ նմա յանձն առնեմ. սակայն որպէս նախ քան զայս տուեալ եմ Յունաց, յայս նուագ ետու նոցա. բայց ոչ որպէս իւրեանց, այլ իբրեւ գործադիր հրամանի իմոյ. զի որպէս են Հայք, նոյնպէս են եւ Յոյնք. չիք ինչ տարբերութիւն 'ի մէջ նոցա առաջի աչաց իմոց. եթէ հնազանդին այսմ, բարի. իսկ եթէ ոչ, կրեսցեն պատիժս անպատճառ։ Զայս ամենայն լուեալ Հայոց խոնարհեցան յերկիր և ասեն. յամենայնի հնազանդեմք ազգովին բարձր հրամանի մեծազօր Արքային, որպէս հրամայեալ է, նոյնպէս և եղիցի։ Յոյնք լռեցին խսպառ. և Տեղապահն կրկնեաց երիցս, թէ անհնազանդքն անկանիլ ունին ընդ մեծի պատժովք։ Հայք ասեն. զչինութիւն տաճարին Ս. Յարութեան այլայլեցին Յոյնք, և փոխեցին զառաջին ձեւն և խանգարեցին զտեղիս մեր. հրամայեցէք զի քակեսցին նորահնար իրքն, և վերստին չինեսցին ըստ առաջին ձեւոյն։ Դատաւորք ասեն, այո՛, հակառակ է օրինաց և վնասոյ մեծի դենպետին այլայլել զառաջին ձեւ չինուածոյն։ Վերստին հարցին երկուց կողմանց, հնազանդի՞ք հրամանի Կայսեր, Հայք ետուն հաւանութիւն, ակամայ կամաք Յոյնք եւս զիջան ասել այո՛։

Ապա արարեալ նոցա Իլամ մատուցին առ Արքայ ('Ի 29 Մայիսի). զի տացէ հրովարտակ առ 'Ի բառնալ զկը-